Հայկուհի Մուրադյան

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՁՆՀԱԼԻ» ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանալի բառեր. մշակութային քաղաքականություն, Խորհրդային միություն, «ազգային մշակույթ», «խորհրդային մշակույթ», «Ազգային զարթոնք»:

1950-60-ական թվականները առանձնանում են խորհրդային մշակութային քաղաքականության պատմության մեջ որպես ազատականացման, մշակութային վերելքի և ազգային զարթոնքի ժամանակաշրջան: Խրուշչովյան մշակութային քաղաքականությունը, ի հակադրություն ստալինյան միանձնյա կառավարման մոդելին, բնորոշվում է նոր մեխանիզմների և գործիքների կիրառմամբ, ազգային մշակույթների «ձևավորման», հանրահռչակման և զարգացման «պետական ծրագրերի» իրականացմամբ:

Այդ առումով կարևորվում է «ձնհալի» շրջանում մշակութային քաղաքականության մեջ ընթացող գաղափարային և ինստիտուցիոնալ փոփոխությունների, մշակույթի «ազգայնացման» և ազգային «թեմաների» արտիկուլացման գործընթացների ուսումնասիրությունը:

Խորհրդային մշակութային քաղաքականությունը «Ձնհալի» տարիներին

Ընդունված է համարել, որ մշակութային քաղաքականության գաղափարական և գործառութային ձևավորման առաջին փուլն ավարտվեց 1953 թ.՝ ԽՍՀՄ մշակույթի նախարարության ձևավորմամբ: Եթե մինչխրուշչովյան շրջանում մշակույթը միաձուլված էր կուսակցական-պետական գաղափարախոսությանը և քաղաքականությանը, ապա 1950-ականների ռեֆորմների արդյունքում մշակույթի ոլորտն առանձնացվեց և դարձավ պետական քաղաքականության առանձին բնագավառ: ԽՍՀՄ-ի մենաշնորհն է համարվում մշակույթի ոլորտի առանձնացման և պետական կազմակերպման պրակտիկան, ինչն ըստ որոշ հետազոտողների դարձավ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում կրկնօրինակման մոդել[1]: 1953 թ. մարտի 15-ի «ԽՍՀՄ նախարարությունների կազմավորման մասին» օրենքի 5-րդ կետը վերաբերում է Մշակույթի նախարարության կազմավորմանը. «Միավորել ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարությունը, ԽՍՀՄ կինեմատոգրաֆիայի նախարարությունը, Արվեստի կոմիտեն, Ռադիոյի տեղեկատվական կոմիտեն, Գլխավոր տպագրատունը և ԽՍՀՄ-ի աշխատանքային ռեզերվների նախարարությունը՝ մեկ նախարարության մեջ՝ կազմելով ԽՍՀՄ մշակույթի նախարարություն»[2]: Այս օրենքի հիման վրա Խորհրդային միության բոլոր հանրապետություններում ստեղծվեցին «Կուլտուրայի մինիստրություններ», որոնք ունեին երկակի ենթակայություն և հայտնի չափով Խորհրդային միության մշակույթի նախարարության ռեգիոնալ մասնաճյուղերն էին: ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրությունը կազմակերպվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի Նախագահության 1953 թ. ապրիլի 17-ի հրամա-

[1] Այս տեսակետը վերջին տասնամյակներում առաջ են քաշել որոշ ռուս հետազոտողներ, մանրամասն տե՛ս Хестанов Р., О функциях культуры, этапах формирования культурной политики, Москва, 2013 : Հատկանշական է, որ արևմտյան հետազոտողները նման մշակութային քաղաքականության սկիզբ են համարում Ֆրանսիայի մշակույթի նախարարության ստեղծումը (1959 թ.) և որևէ կերպ չեն շեշտում ԽՍՀՄ-ի նման դերակատարումը:

[2] Закон от 15 Марта 1953 года, О Преобразовании Министерств СССР // https://ru.wikisource.org/wiki/Закон_СССР_от_15.03.1953_о_преобразовании_министерств_СССР, Пункт 5-ий: “Объединить Министерство высшего образования СССР, Министерство кинематографии СССР, Комитет по делам искусств, Комитет радиоинформации, Главполиграфиздат и Министерство трудовых резервов СССР в одно Министерство — Министерство культуры СССР”.

նագրով[1]: Նրա կազմի մեջ մտան արվեստի գործերի, ակումբային հիմնարկների և ժողստեղծագործության վարչությունները, արտասահմանյան կապերի, թանգարանների, գրադարանների, պլանային-ֆինանսական, վերահսկողության-վերստուգման բաժինները[2]: Հրամանագրով սահմանվում են նաև Կուլտուրայի մինիստրության գործառույթները, որոնք ներառում են հանրապետության թատերական, երաժշտական, պարարվեստի, կերպարվեստի, դեկորատիվ–կիրառական, էստրադային արվեստների և կուլտուր-լուսավորական աշխատանքի կազմակերպումը[3]: Նախարարության իրավասությանը ենթակա են հանրապետության բոլոր պետական թատրոնները, թանգարանները, գրադարանները, երգի և պարի համույթները, ակումբները, մշակույթի տները, որոնց գործունեությունը կազմակերպվում էր նախարարության համապատասխան վարչությունների և բաժինների կողմից: Կուլտուրայի մինիստրությանը կից գործող պաշտոնական մամուլն էր (օրգան) «Սովետական արվեստ» ամսագիրը և «Կուլտուր–լուսավորական աշխատանք» հանդեսը:

Այսպիսով՝ համաշխարհային պատմության մեջ Մշակույթի նախարարության ձևավորման առաջին փորձը պատկանում է Խորհրդային միությանը, որը (փորձը) 20-րդ դարում դարձավ արևմուտքի համար կրկնօրինակման հիմք: Թեև արևմտյան գիտնականները (Michel Guy, David Loosley, Jean Phillipe-Lecat) նշում են, որ համաշխարհային պատմության մեջ մշակույթի նախարարության ձևավորման առաջին փորձը Ֆրանսիայինն է, սակայն, այնտեղ մշակույթի նախարարությունը ձևավորվեց Շարլ դը Գոլի իշանության տարիներին՝ ավելի կոնկրետ վերջինիս՝ 1959 թվականի հուլիսի 24-ի հրամանով[4]:

Մշակույթի նախարարության ձևավորումը խորհրդային մշակութային քաղաքականության մեջ սկսվող փոփոխությունների առաջին քայլն էր: Ստալինի մահվամբ (1953 թ. մարտի 5-ին) և Ն. Խրուշչովի իշխանության գալով սկսվում է խորհրդային մշակութային քաղաքականության նոր փուլը: 1956 թվականի փետրվարին կայացած ԽՄԿԿ 20-րդ համագումարում Ն. Խրուշչովը «Անձի պաշտամունքի և դրա հետևանքների մասին» իր զեկույցում քննադատեց ստալինյան բռնիշխանությունը, ինչն էլ հիմք դարձավ երկրում հետստալինյան հասարակական-մշակութային նոր իրավիճակի առաջացման համար[5]: Սա Խորհրդային Միությունում իրականացվող բարեփոխումների առաջին փորձն էր, որն իր անվանումը փոխառեց Ի. Էրենբուրգի՝ այդ տարիների խորհրդային կյանքը նկարագրող «Оттепель» վիպակի վերնագրից, իսկ հետագայում հայերենում թարգմանաբար ամրագրվեց իբրև «Հալոցք» կամ «Ձնհալ»: Հարկ է նշել, որ «Ձնհալը» տարածվեց Խորհրդային միության հասարակական կյանքի միայն մի քանի ոլորտների վրա՝ քաղաքականություն, տնտեսություն, սպորտ, բայց առավել արտահայտչական էր՝ մշակույթի ոլորտի վրա: Խորհրդային իշանությունների քաղաքականության «բարեփոխումները» չի կարելի դիտարկել որպես ժողովրդավարական զարգացումների ուղի, քանի որ Խորհրդային միությունը շարունակում էր մնալ միակուսակցական պետական համակարգ, այն չէր շեղվել լենինյան զարգացման ուղուց և, պահպանելով բռնապետական ռեժիմը, բացառում էր քաղաքական այլախոհության ցանկացած դրսևորում[6]: Ամենաէական փոփոխությունը խրուշչովյան քաղաքականության մեջ այն էր, որ 1956 թ. հետո ամեն տեղ ժողովրդի թշնամի տեսնելու և նրա նկատմամբ հաշվեհարդարի ուղին

---

[1] ՀԱԱ, Ֆ. 80, ց. 12, գ. 1, թ. 2:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Creation of the Ministry // http://traduction.culture.gouv.fr/url/Result.aspx?to=en&url=http://www.culture.gouv.fr/Nous-connaitre/Decouvrir-le-ministere/Histoire-du-ministere/L-histoire-du-ministere/Creation-du-Ministere,

[5] Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Ե., 2001 էջ 35:

[6] Անձի պաշտամունքի քննադատությունը և 20-րդ համագումարում ընդունված որոշումները սկսեցին ինտենսիվ քննարկվել ռեգիոնալ (սոցիալիստական հանրապետությունների) պետական ժողովներում, որտեղ շատերը վախենում էին քննադատել Ստալինին, քանի որ իրենց համար դեռ պարզ չէր նոր քաղաքական ուժերը ինչ նպատակներ և հեռակա ծրագրեր ունեն: Այսինքն, պետական ապարատը չէր փոխվել, չէին փոխվել նաև կառավարման մեխանիզմները:

ընտրելու, մասսայական բռնաճնշումների քաղաքականությունից հրաժարվելը հիմք դարձավ քաղաքական կառավարման, հարցերի առավել ազատ քննարկման նոր մեխանիզմների մշակման համար: Չնայած մշակույթի դաշտի հարաբերական ազատականացմանը՝ Խորհրդային Միությունը մնաց որպես ամբողջատիրական համակարգ՝ ընդհուպ մինչև փլուզումը:

Ցանկացած ամբողջատիրական համակարգում իշխանությունների ձեռքում կառավարման ամենատարածված միջոցը ճնշումներն են, պարզապես կարելի է խոսել ճնշումների զանգվածային կամ առավել մեղմ լինելու մասին: Ուստի պատահական չէ, որ Խրուշչովի կողմից դատապարտված ստալինյան խմբի թիմակիցները միևնույն «ստալինյան միջոցներով» պատժվեցին[1]: 20-րդ համագումարից հետո ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության անդամներից յուրաքանչյուրը կարող էր իր հասցեին նույն մեղադրանքները ստանալ և խիստ պատժվել: Այս առումով մեջբերում անենք Արմենակ Մանուկյանի խոսքերը. «...քաղաքական գործընթացներն այլ կերպ ընթանալ չէին կարող, քանի որ հենց ինքը՝ Ն. Խրուշչովը և մյուս ղեկավարները այդ համակարգի ծնունդն էին, մասնակից էին անհատի պաշտամունքի տարիներին տեղ գտած հանցագործություններին և չէին կարող պրակտիկ գործունեության մեջ կտրուկ շրջադարձ կատարել»[2]: Ըստ Ռ. Միրզախանյանի՝ Ն. Խրուշչովի կայացրած որոշումների և վարած քաղաքականության մեջ, ինչպես և իր անձի մեջ կար երկվություն: Մի կողմից նրա զեկուցման մեջ Ստալինը հանդես է գալիս որպես խոշոր մարքսիստ-տեսաբան, որը մեծ վաստակ ուներ «ժողովրդի թշնամիների» դեմ պայքարում, իսկ մյուս կողմից՝ դատապարտում էր նրան «լենինյան ուղուց» շեղվելու, սոցիալիզմի կայացման հաղթանակը իր անձին վերագրելու մեջ: Փաստացի, անձի քննադատումով արդարացվում էր քաղաքական համակարգը, որը պետք է շարունակեր սոցիալիզմի կառուցման գործընթացը[3]: Խրուշչովյան քաղաքականության մեջ երկվության խնդիրը երևում է նաև մշակույթի ոլորտում: Մի կողմից խրախուսվում է մշակույթի ազատ զարգացումը ազգային դրսևորումներով, մյուս կողմից՝ վերահսկողության մեխանիզմները շարունակում են գործել և բացառել հակախորհրդային/ապախորհրդային որևէ դրսևորում մշակույթի ոլորտում: Խրախուսվում է ինքնագործունեությունը, բայց իշխանությունները փորձում են հնարավորինս ինքնագործունեության ցանկացած դրսևորում վերահսկելի դարձնել և պահել իրենց տեսադաշտում: Եթե այս տեսանկյունից դիտարկենք հայ ինքնության և ազգայնականության ձևավորման հարցը, ապա, ինչպես նշում է Ռ. Փանոսյանը, 1960-ական թթ. խորհրդահայ ազգայնականությունը ձևավորվեց ոչ թե հակախորհրդային կամ ապախորհրդային քարոզչության և տարրերի վրա, այլ, հակաթուրքական տրամադրությունների, ինչն այդ շրջանում համընկնում էր նաև խորհրդային իշխանությունների արտաքին քաղաքական շահերի հետ[4]: Այդ է պատճառը, որ 60-ական թթ. խորհրդահայ մշակույթի ազգային կոնցեպտի ձևավորումը խորհրդային իշխանությունների կողմից մասամբ ընդունելի էր:

Հայ մշակութային կյանքի զարգացման փոփոխությունները սկսվեցին հասարակական-քաղաքական փոփոխություններին զուգընթաց: Թե՛ խորհրդահայ հասարակական-քաղաքական, թե՛ մշակութային կյանքի վրա մեծապես ազդեցին ՀԿԿ Կենտկոմի առա-

---

[1] Լավրենտի Բերիան 1953 թվականի հունիսի 26-ին ձերբակալվեց ընտանիքի հետ միասին: Ավելի ուշ Բերիայի ընտանիքը աքսորվեց Վրաստանի սահմաններից դուրս: 1953 թվականի հուլիսին ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը որոշում ընդունեց «...Պ. Բերիային հանձնել Գերագույն դատարան՝որպես կուսակցության և խորհրդային ժողովրդի թշնամի»: Առավել մանրամասն տե՛ս՝ http://istmat.info/node/26522: Բերիան դատապարտվեց մահապատժի իր զիանկիցների հետ միասին: Խորհրդային Հայաստանում առաջին քարտուղարի պաշտոնից ազատվեց Գրիգոր Հարությունյանը՝ որպես Բերիայի զինակից և կամակատար: Ն. Խրուշչովի կողմից քննադատվող «ստալինյան հանցախումբը» պատժվեց միևնույն «ստալինյան» մեխանիզմներով՝ բռնաճնշումներ, աքսոր, մահապատիժներ:

[2] Մանուկյան Ա., Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Ե., 2005, էջ 29:

[3] Միրզախանյան Ռ., Խորհրդահայ մշակույթը 1956-1990 թթ., Ե., 2009, էջ 19:

[4] Panossian R. The Armenians from Kings and Priests to Merchants and Commissars, UK, 2006, p. 341.

ջին քարտուղար Յ. Զարոբյանի պաշտոնավարությունը (1960-1966 թթ.)[1]: 1960-ական թվականներին հայ մշակույթի զարգացման առավել բուռն տարիներն էին: 1966 թվականին Յակով Զարոբյանին փոխարինում է Անտոն Քոչինյանը, (1966-1973 թթ.) որի պաշտոնավարության տարիներին ևս հայ մշակույթը շարունակում է վերելք ապրել: Խրուշչովի՝ իշխանության ղեկը թողնելով չի ավարտվում ճնհալի տարիների հայ մշակույթի վերելքը, այն շարունակվում է նաև Բրեժնևի «լճացման» տարիներին՝ մինչև 1970-ական թթ.:

Առանձնացնենք մի քանի ոլորտներ, «ազգային թեմաներ», որոնք հատկապես ակտուալ դարձան 1960-ական թվականներին և դիտարկենք դրանց շրջանառման մեխանիզմները:

- Ցեղասպանության հարցի ակտուալացում,
- արցախյան խնդրի արծարծումը
- հայ առաքելական եկեղեցու գործունեության հարաբերական ազատականացում (մի քանի եկեղեցիների վերաբացում, Մայր աթոռ սբ. Էջմիածնի և ամենայն հայոց կաթողիկոսի ներառումը պետական պաշտոնական որոշ ընթացակարգերի մեջ),
- ազգային մշակույթի ակնառու ներկայացուցիչների հոբելյանների նշում պետական մակարդակով (Կոմիտասի ծննդյան 100-ամյակը),
- մշակութային ինքնագործունեության ազատականացում (ազգային երգ ու պարի համույթների ձևավորում, բանահյուսության զարգացում, էպոս և այլն),
- ազգային թեմաների արտացոլումը արվեստում, գրականության և ճարտարապետության մեջ, նոր ժանրերի ձևավորումը (Ս. Մուրադյան, Հ. Զարդարյան, Ռ. Իսրայելյան, Հ. Մաթևոսյան, Մ. Գալշոյան և այլոք),
- ինքնահրատ գրականության ձևավորումը:

1960-ական թվականներին հանրային և պետական քննարկման թեմաներից էր արցախյան խնդիրը: Շատերը նույնիսկ փորձում էին առաջ քաշել Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցը: Կազմակերպվում էին առաջին բողոքի ցույցերը, բաժանվում էին թռուցիկներ. «հետ տվեք մեր հողերը» գրությամբ[2]: Արցախյան հարցը բարձրաձայնվեց և՛ հանրային դիսկուրսում (բողոք-ցույցերի միջոցով), և՛ պետական մարմինների կողմից: Այս տեսակետից հետաքրքրական է Հայաստանի մտավորականների նամակը ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևին, Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներ Վ. Ախունդովին և Ա. Քոչինյանին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին միացնելու խնդրանքով (1966 թվական, օգոստոս)[3]: Նամակի բովանդակությունը կոմունիստական գաղափարախոսության կոնտեքստում ազգային հողերի լուծման խնդիրն էր, որը առաջ էր քաշվել հայ մտավորականության ներկայացուցիչների կողմից: Մեջբերենք նամակից մի հատված. «...Մենք համոզված ենք, որ այս հարցի լուծումը էլ ավելի կամրապնդի մեր ժողովուրդների համագործակցությունը, իսկ սահմանների անհրաժեշտ ճշտումը մեկ անգամ ևս կապացուցի մեր ժողովուրդների եղբայրությունը և կապիտալիստական աշխարհին ցույց կտա, որ սոցիալիզմի երկնակամարի տակ իշխում է փոխըմռնման ոգին, որ ազգամիջյան բոլոր հարցերը վճռում են կոմունիստական բարձր գիտակցությամբ: ....Մեր երկու ժողովուրդները հոգեբանորեն պատրաստ են հարցի լուծմանը, քա-

[1] Յակով Զարոբյանի ունեցած ներդրումը խորհրդային մշակութային քաղաքականության մեջ, ազգային մշակույթի «ձևավորման», բարձրաձայնման և պետական մակարդակով լուծումներ ստանալու գործում անգնահատելի է: Նրա կողմից բարձրաձայնված հարցերը, մասնավորապես ցեղասպանության 50-ամյակը ոգեկոչելու թույլտվությունը ԽՄԿԿ Կենտկոմից ստանալը թվում էր անհնարին: Մոսկովյան վերադասին համոզելու հարցում Յա. Զարոբյանն օգտագործեց հայկական Սփյուռքի գործոնը՝ նշելով, որ դրանով Կրեմլը ձեռք կբերի Սփյուռքի քաղաքական աջակցությունը, իսկ հակառակ դեպքում Սփյուռքում կուժեղանա հակախորհրդային տրամադրվածությունը: Յա. Զարոբյանի մասին առավել մանրամասն տե՛ս՝ Заробян Н.Я., Яков Заробян и его эпоха, Е., 2008, с. 120.

[2] Թռուցիկների բովանդակությանը ծանոթացել ենք Ցեղասպանության թանգարանի արխիվային նյութերից, որոնք դեռ հրատարակված չեն, 20-25.02.2018:

[3] Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր: Կազմ. Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., Ե., 2003, էջ 25-27, 33-35:

նի որ խորհրդային կարգերի 50 տարիների ընթացքում մենք դաստիարակվել ենք ինտերանցիոնալիզմի ոգով, եղբայրության ոգով»[1]: Այս նամակի ամբողջական բովանդակությունը և հատկապես մեր կողմից մեջբերված հատվածը ցույց է տալիս, որ 1920-ական թվականներին խորհրդային իշանությունների տարածած կարգախոսը, որով պետք է առաջնորդվեին բոլորը, այն է «Մշակույթը պետք է լինի ձևով ազգային, իսկ բովանդակությամբ՝ պրոլետարական (ավելի ուշ պրոլետարական բառը փոխարինվեց խորհրդային եզրով)», 1950-60-ական թվականներին փոխվում է՝ «Մշակույթը դառնում է ձևով խորհրդային (որպեսզի թույլատրելի լինի խորհրդային իշխանությունների կողմից), իսկ բովանդակությամբ՝ ազգային»:

Մտավորականների այս նամակին հաջորդում է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի նախագահ Ա. Քոչինյանի և նախարարների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանի գրությունը ԽՄԿԿ Կենտկոմ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին միացնելու մասին (1966 թվական, սեպտեմբերի 30)[2]: Նամակում հողերի վերադարձման խնդիրը ներկայացվում է որպես հայ ժողովրդի համար հույժ կարևոր, անհարժեշտ մի խնդրանք-պահանջ, որը թույլ կտա վերականգնել վստահությունը խորհրդային իշխանությունների հանդեպ: Այս նամակը, կարծեք թե հայկական հողերի վերադարձման (նամակում հատկապես նշվում է Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի տարածքների վերդարձնելու մասին և բերվում են պատմական փաստեր, որոնք ապացուցում են այդ հողերի՝ Խորհրդային Հայաստանին միանալու արդարացիությունը), ցեղասպանության թեմայի շոշափման, պետական հարթակում քննության առնելու առաջին փորձն է:

1960-ական թվականներին արդիական է դառնում ցեղասպանության թեմայի քննարկումը, բարձրաձայնումը, թուրքական իշխանություններին ուղղված քննադատությունները: Ցեղասպանության թեման ստալինյան շրջանում արգելված թեմաներից էր. դրա պաշտոնական հիշատակումը կամ դրան նվիրված որևէ միջոցառում կազմակերպելը խստիվ արգելվում էր կենտրոնական իշխանությունների կողմից. «45 տարի, 1920-ից մինչև 1965 թիվը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք ... տխրելու իրավունքից»[3]: Ազատականացման շրջանում ցեղասպանության թեման դարձավ ինչպես հանրային, այնպես էլ պետական մարմինների լայն քննարկումների առարկա: Ցեղասպանության 50-ամյակի տարելիցին նվիրված հիշատակության միջոցառումներ կազմակերպելու, զոհերի հիշատակին հուշակոթող կառուցելու գործում մեծ ներդրում է ունեցել Յ. Զարոբյանը[4]: Խորհրդային Հայաստանում, Յա. Զարոբյանի քաղաքական գործունեությունը սկսվում է 1949 թվականին (նշենք, որ 1914 թվականին Զարոբյանների ընտանիքը Արդվինից մազապուրծ ապաստանում է Բաթումում, ապա տեղափոխվում Նոր Նախիջևան՝ այժմ՝ Դոնի Ռոստով, Ռուսաստանի Դաշնություն): Դառնալով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար (1960)՝ նա իրականացնում է մի շարք կարևոր, ժամանակի համար անհնարին թվացող ծրագրեր՝ Սփյուռքի հետ կապերի ամրագրում, ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների կազմակերպում, ցեղասպանության զոհերի հուշահամալիրի կառուցում և այն: 1964 թ. դեկտեմբերի 13-ին Յա. Զարոբյանը ԽՄԿԿ Կենտկոմին ուղարկած «1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի հետ կապված միջոցառումների մասին» նամակում նշում է, որ հայերի զանգվածային կոտորածը, տեղահանությունը «Թուրքիայի կառավարող հանցախմբի կողմից խոշոր մաշտաբներով ցեղասպանության մարդատյաց քաղաքականության իրականացումն էր»: Գիտակցելով ԽՍՀՄ արտաքին հարաբերությունները Թուրքիայի հետ՝ Յա. Զարոբյանը ձևափոխում է հուշամալիրի անվանումը, այն ներկայացնելով «Առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ նահատակներին նվիրված կոթող» (այդ կերպ դյուրացվեց Մոսկվայի՝ հուշահամալիրի կառուցման համար տրվող թույլտվութ-

[1] Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր: Կազմ. Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., Ե., 2003, էջ 34:
[2] Նույն տեղում, էջ 35-43:
[3] Պետրոսյան Վ., Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես... իմ վիշտը, Ե., 2003, էջ 133:
[4] Զարոբյան Ն., Յակով Զարոբյանը և նրա դարաշրջանը, Ե., 2009, էջ 15:

յունը)[1]: Մինչդեռ 1965 թ. մարտի 16-ի ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կարգադրության մեջ հուշարձանը կոչվում է «1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող կոթող»[2]: Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի[3] բացումը տեղի է ունենում 1967 թ., որին Յա. Զարոբյանը չի մասնակցում: Այդ ժամանակ Կենտկոմի առաջին քարտուղար էր դարձել Անտոն Քոչինյանը:

1960-ական թվականներին նկատվում է որոշակի ազատություն նաև կրոնի մեջ: Թեև գիտա-աթեիստական պրոպագանդան շարունակում է մնալ քարոզչության հիմնական ուղղությունը, սակայն, դրան զուգահեռ նկատվում են «կրոնական ակտիվություն»: Օրինակ, այս առումով հետաքրքրական է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումը մի քանի եկեղեցիների վերաբացման մասին (1957 թիվ)[4]: Սույն որոշման մեջ նշվում է. «... Հաշվի առնելով հավատացյալների բազմաթիվ դիմումները, կաթողիկոս Վազգեն Ա-ի միջնորդությունը, ինչպես և Հայ եկեղեցու գործերի խորհրդի եզրակացությունը.

ա) բավարարել հայ-լուսավորչական հավատացյալների խնդրանքը հետևյալ եկեղեցիների բացման մասին. Ստեփանավան քաղաքի եկեղեցին, Բասարգեչարի շրջանային կենտրոնի եկեղեցին, Գորիսի շրջանի Տաթևի վանքը,

բ) հիշյալ եկեղեցիների շենքերը հանձնել հավատացյալներին կրոնական արարողություններ կատարելու համար...»[5]: Այս երկար մեջբերումը անհրաժեշտ համարեցինք՝ ցույց տալու համար, որ 1960-ական թվականները ոչ միայն ազգային մշակույթի, այլև կրոնական մշակույթի և պրակտիկաների վերականգնման շրջան էին: Կրոնական հանդուրժողականությունը աթեիստական դոգմատիկ հասարակությունում մեծ ձեռք բերում կարելի համար ազգային մշակույթի պահպանման տեսանկյունից: Այս ամենին կարելի է հավելել նաև Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի գրությունը ԽՄԿԿ Կենտկոմ՝ Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով[6] պարգևատրելու մասին (1968 թիվ)[7]:

Խրուշչովյան ձնհալի տարիներին հայ մշակույթի զարգացումը նշանավորվեց մշակութային ինքնագործունեության ակտիվությամբ: Ձևավորվեցի ազգային երգ ու պարի խմբակներ, որոնք մեկնում էին տարբեր հյուրախաղերի, և հայ մշակույթի տարածման մունետիկներն էին դառնում:

Խրուշչովյան շրջանի գաղափարական ազատականացումը դրևորվում է նաև նրանով, որ ընդամենը երկու տասնամյակ առաջ գործող հայ արվեստի ներկայացուցիչները, ովքեր ստալինյան շրջանում քննատադատվում էին ֆորմալիզմի (ձևամոլություն)[8] կամ կոսմոպոլիտիզմի[9] մեջ, ձերբակալվում էին, կամ արգելվում էր նրանց

---

[1] Դալլաքյան Կ., Հուշապատում. (դեմքեր, իրողություններ, մտորումներ), Ե., 1998, էջ 62:

[2] Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր: Կազմ. Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., Ե., 2003, էջ 25-26:

[3] Հուշահամալիրի շինարարության և ճարատարապետության մասին առավել մանրամասն տե՛ս՝ Бальян К., Мемориал. Егерн, Екатеринбург, 2015.

[4] Անտոն Քոչինյան: Փաստաթղթեր, նամակներ, հուշեր: Կազմ. Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., Ե., 2003, էջ 14-15:

[5] Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 14-15:

[6] Հարկ է նշել, որ խրուշչովյան մշակութային քաղաքականության մեջ փոփոխության ենթարկվում նաև գործիքների ընտրության հարցը: Եթե տալինյան քաղաքականության մեջ բռնաճնշումները, հարկադրանքը և վախի մթնոլորտի ստեղծումն էին հիմք հանդիսանում մշակույթի բնագավառում որոշակի նպատակների հասնելու համար կամ զուտ վերահսկողությունը չկորցնելու և հեշտ կառավարելի հասարակություն ստեղծելու համար, ապա Խրուշչովի կառավարության տարիներին, մասմաբ պահպանելով նաև պատժի միջոցները, դրանք հիմնականում փոխարինվում են պարգևների, շքանշանների, նյութական աջակցության, պատվոգրերի և կոչումների գործիքներով:

[7] Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 48-49:

[8] Ֆորմալիզմ եզրը խորհրդային միություն օգտագործվում էր գաղափարական պայքարում ուղղված արվեստի տարբեր ոլորտներում՝ հատկապես երաժշտության, կերպարվեստի և գրականության մեջ «ոչ պրոլետարական» դրսևորումների մեջ (1930-1950-ական թվականներին): Հատկապես ֆորմալիզմի մեջ սկսեցին մեղադրվել:

[9] 1948 թվականի վերջին ֆորմալիզմի քննադատության կողքին բացահայտվեց նոր «վնասակար» թեքում՝ «կոսմոպոլիտիզմը», որը որակվեց որպես «արևմուտքի առջև խոնարհվելու» գործելակերպի դրսևորում: Խորհրդահայ մշակույթում ֆորմալիզմի և կոսմոպոլիտիզմի դեմ պայքարի մասին առավել

ստեղծագործությունների լուսաբանումը, ապա 1960-ական թվականներին հենց նույն արվեստագետները արժանանում են շքանշանների և պատվոգրերի: Այդ արվեստագետների թվին են պատկանում հայտնի հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը[1], նկարիչ Մարտիրոս Սարյանը[2], բանաստեղծ Եղիշե Չարենցը և այլոք:

Այսպիսով, «Ջնհալի» տարիներին խորհրդահայ մշակութային քաղաքականությունը ընթացավ քաղաքականապես համեմատաբար ազատ միջավայրում, ինչը նպաստեց ազգային գաղափարախոսության, պատմության և մշակութային ժառանգության ակտուալացմանը, նրա առանձին համալիրների ներառմանը իրական մշակութային գործընթաց; Այս ամենն ընթանում էր որոշակի փոխկապակցված գաղափարական «պայմանավորվածություններ» և ադմինիստարատիվ մեխանիզմերի միջոցով, որոնցից կարելի է կարևորել հետևյալները.

Առաջին. փոխվեց մշակութային քաղաքականության ադմինստրատիվ-վարչական կառուցվածքը. մշակույթը սկսեց առանձնանալ քարոզչությունից (ագիտացիայից), ձևավորվեց Մշակույթի նախարարություն (1953), որը ներառում էր արվեստի գործերի, ակումբային հաստատությունների և ժողստեղծագործության վարչությունները, թանգարանների, գրադարանների, ուսումնական հաստատությունների, կադրերի, պլանային-ֆինանսական, վերհասկողության-վերստուգման բաժինները:

Երկրորդ. մշակութային քաղաքականության մեջ գործիքների ընտրությունը փոխվել էր. ստալինյան բռնաճնշումների և հարկադրանքի մեթոդը փոխարինվել էր արվեստագետներին և մտավորականությանը «սիրաշահելու և խրախուսելու» մեթոդներով (պատվոգրեր, շքանշաններ, կոչումներ, նյութական աջակցություն և այլն):

Երրորդ. թեև մշակույթի ցանկացած ոլորտ պետք է գովերգեր խորհրդային կյանքն ու սոցիալիստական շինարարությունը, այնուամենայնիվ, հայ մտավորականությունը կարողանում էր ճանապարհներ գտնել ազգային մշակույթի զանազան դրսևորումների և զարգացումների համար:

Айкуи Мурадян, Культурная политика Советской Армении в 1950-1960-х гг.. 1950-60-е годы отличаются историей советской культурной политики как периода либерализации, культурного переворота и национального пробуждения. Культурная политика Хрущева, в отличие от модели культурной политики Сталина, характеризуется использованием новых механизмов и инструментов для реализации «государственных программ» для «формирования» гласности и развития национальных культур. Эта статья представляет собой попытку изучить идеологические и институциональные изменения в культурной политике, исследовать процессы «национализации» культуры и формулировки национальных тем. Исследование основано на изучении архивных материалов, первичных и вторичных источников.

Ключевые слова: Культурная политика, Советский Союз, «национальная культура», «советская культура», «национальное пробуждение».

Haykuhi Muradyan, Cultural policy of Soviet Armenia in 1950-1960s. The 1950-60s are distinguished in the history of Soviet cultural policy as a period of liberalization, cultural upheaval and national awakening. Khrushchev's cultural policy, in contrast to Stalin's

---

մանրամասն տե՛ս Եթիմյան Գ., Պետական իշխանության մարմինների քաղաքականությունը խորհրդային մշակույթի բնագավառում, 1945-1990 թվականներին, Վանաձոր, 2012, էջ 60-87:

[1] Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի գրությունը ԽՄԿԿ Կենտկոմ՝ Արամ Խաչատրյանին ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու մասին, 21 փետրվարի, 1973 թիվ // Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 66-67:

[2] Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի գրությունը ԽՄԿԿ Կենտկոմ՝ Մարտիրոս Սարյանին Լենինի շքանշանով պարգևատրելու մասին, 16 հունվարի, 1970 թիվ // Հովսեփյան Է., Հարությունյան Ա., խմբ. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 60-63:

cultural policy model, is characterized by the use of new mechanisms and tools for the implementation of "state programs" for the "formation", publicity and development of national cultures. This article is an attempt to examine the ideological and institutional changes in cultural policy, to research the processes of "nationalization" of culture and the articulation of the national themes. The research is based on the study of archival materials, primary and secondary sources.

Key words: Cultural policy, Soviet Union, "national culture", "Soviet culture", "national awakening".